# ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համար 4 հիմնական դպրոցի Ուսուցչուհի՝ Աննա Համբարձումյան 2022_2023 ուսումնական տարվա հաշվետվություն

## ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1) Պլանավորում և իրականացնում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը՝ հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչներին համապատասխան:
2) Ապահովում է կրթական ծրագրերի կատարումը, հանրակրթական առարկայական չափորոշիչներով ամրագրված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն պահանջների յուրացումը սովորողների կողմից՝ կիրառելով դասավանդման արդյունավետ մեթոդներ և ժամանակակից տեխնոլոգիաներ:
3) Բացահայտում, դիտարկում, հետազոտում և գնահատում է երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքները:
4) Նպաստում է սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորմանը, դաստիարակում հայրենասիրություն, ձևավորում պատշաճ վարքագիծ և վարվելակերպ:
5) Սովորողների մեջ զարգացնում է ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի անհատական կարողությունները:
6) Նպաստում է սովորողների մեջ ինքնակառավարման տարրերի ձևավորմանը:
7) Հարգում և պաշտպանում է սովորողի իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը:
8) Հետևողականորեն կատարելագործում է իր առարկայական և մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները, իրականացնում ստեղծագործական և հետազոտական աշխատանքներ: 9) Համագործակցում է սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում: 10)Համագործակցում է գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով:
11) Մասնակցում է հաստատության մեթոդմիավորումների (առարկայական մասնախմբերի) աշխատանքներին:
12) Պահպանում է ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջները:

| 1) Պլանավորում և իրականացնում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը՝ հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչներին համապատասխան: | | | |
|---|---|---|---|
| Պլանավորում | | | |
| Աշխատանք | | Նկարագրություն<br>Ծանոթություն | |
| Կազմել եմ իմ առարկաների թեմատիկ պլանը: | | Առարկայական թեմատիկ պլանավորումը կատարել եմ՝ հիմք ընդունելով հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչները:<br>/Հավելված N 1<br>ՀՀ կրթության և գիտության նախարարի<br>2011 թ. 29 օգոստոսի- N 1000-Ա/Ք հրամանի/ | |
| Առարկան | Դասարանը | Շաբաթական ժամերի քանակը | Տարեկան Ժամերի քանաը |
| Ես և շրջակա աշխարհը | II | 1 | 30 |
| Ես և շրջակա աշխարհը | III | 2 | 64 |
| Ես և շրջակա աշխարհը | IV | 2 | 64 |
| Տեխնոլոգիա | V | 1 | 32 |
| Տեխնոլոգիա | VI | 1 | 32 |

| Պլանավորում | |
|---|---|
| Բոլոր դասերի պլանները կազմելիս հաշվի եմ առել չափորոշչային պահանջները: | Պլանում նշել եմ դասի ակադեմիական և սոցիալական նպատակները, նկարագրելեմ դասի ընթացքը /խթանման փուլ, իմաստի ընկալման փուլ, կշռադատման, գնահատման փուլ, տնային հանձնարարություն/: |
| Կազմել եմ բոլոր թեմատիկ գրավորաշխատանքների տեքստերը: | Կազմել եմ թեստային աշխատանքներ՝հիմք ընդունելով հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչները: Գրավորների անցկացման համար որպես ուսումնականձեռնարկներ օգտագործել եմ «Թեմատիկ և կիսամյակային աշխատանքներ 3_րդ դասարանի « ժողովածուն: / Թելադրության նյութերի ժողովածու 3 _րդ դասարանների համար, /Փոխադրությունների ժողովածու, հեղինակային խումբ/… |
| Մշակել եմ բանավոր և գրավոր գնահատման սկզբունքները: | ՀՀ հանրակրթական դպրոցներում գնահատման համակարգի կիրառմանվերաբերյալ մեթոդական ցուցումներիհիման վրա: |

| Իրականացում | |
|---|---|
| Աշակերտներին ներկայացրել եմգնահատման սկզբունքները: | Ներկայացրել եմ հատվածներ ՀՀ ԿԳՆ ԿԱԻ կողմից երաշխավորված «Ընթացիկգնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան»/ հեղինակներ՝ Օ. Ս. Միքայելյան, Ս. Օ. Միքայելյան/ ուսուցչի ձեռնարկից: Աշակերտներին ներկայացրել եմ բանավոր հարցումներից, գրավոր աշխատանքներից /թելադրություն,փոխադրություն, շարադրություն, թեստային աշխատանք, գործնական աշխատանք/ գիտելիքների և կարողությունների գնահատման չափանիշները: /Մեթոդական ցուցումներ2014-2015 ուսումնական տարում ՀՀ հանրակրթական դպրոցներում գնահատման համակարգի կիրառմանվերաբերյալ /: |
| Իմ կողմից աշակերտների բանավոր պատասխանների համար նշանակված գնահատականները հիմնականում համընկել են գրավոր աշխատանքների գնահատականներին: | Բանավոր հարցման արդյունքում աշակերտները ստացել են ավելի բարձրգնահատականներ: Ի տարբերություն բանավոր խոսք կառուցելու կարողություններին՝ որոշ թվով աշակերտների մոտ գրավոր խոսք կառուցելու կարողություններն ավելի թույլ են զարգացած: |

| | |
|---|---|
| | <<Ինչպես արդյունավետ վարել դասը>>,ներկայացրել եմ մեթոդմիավորման նիստերում: Նպատակը եղել է |
| | մանկավարժական փորձի ընդհանրացումնու ներդնումը: |
| Բոլոր դասալսումներից հետո մասնակցելեմ դասի քննարկմանը և կատարել եմ անհրաժեշտ հետևություններ: | Դասալսումներ են կատարել դպրոցիտնօրենը, տնօրենի՝ ուսումնական աշխատանքների գծով տեղակալը, մեթոդմիավորման բոլոր ուսուցիչները, այլառարկաների ուսուցիչներ: |
| 2) Ապահովում է կրթական ծրագրերի կատարումը, հանրակրթական առարկայականչափորոշիչներով ամրագրված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն պահանջների յուրացումը սովորողների կողմից՝ կիրառելով դասավանդման արդյունավետ մեթոդներ և ժամանակակից տեխնոլոգիաներ: | |
| Պլանավորում | |
| Աշխատանք | Նկարագրություն Ծանոթություն |
| Ծրագրի պահանջների կատարումը ստուգելեն տնօրենի՝ ուսումնական աշխատանքներիգծով տեղակալը և առարկայական մեթոդմիավորման նախագահը: Դիտողություններ չեմ ստացել: | Բոլոր դասարաններում ապահովել եմծրագրերի կատարողականը: |

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ

2021_2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

| | ԱԶԳԱՆՈՒՆ | ԴԱՍ. | ԱՌԱՐԿԱ | ԺԱՄԵՐԻՔԱՆԱԿԸ | ՀԱՄԱՊԱՏ. | ՆՇՈՒՄՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ա.Համբարձումյան | 2-րդ | Ես և շրջակա աշխարհը | 30 | 27 | 4 դասաժամ՝ 21.09 28.01, 24.04, 01.05 |
| 2 | Ա.Համբարձումյան | 3-րդ | Ես և շրջակա աշխարհը | 64 | 61 | 4 դասաժամ՝ 21.09 28.01, 24.04, 01.05 |
| 3 | Ա.Համբարձումյան | 4-րդ | Ես և շրջակա աշխարհը | 64 | 61 | 4 դասաժամ՝ 21.10, 28.01, 24.04, 01.05 |
| 4 | Ա.Համբարձումյան | 5-րդ | Տեխնոլոգիա | 32 | 32 | 4 դասաժամ՝ 21.10, 28.01, 24.04, 01.05 |
| 5 | Ա.Համբարձումյան | 6-րդ | Տեխնոլոգիա | 32 | 32 | 4 դասաժամ՝ 21.10, 28.01, 24.04, 01.05 |

| Աշխատանք | Նկարագրություն<br>Ծանոթություն |
|---|---|
| Դասավանդման ժամանակ կիրառել եմհետևյալ մեթոդները: | Ուսուցման ճանաչողական գործընթացըակտիվացնելու համար կիրառվել են ուսուցման ավանդական մեթոդները՝ պատմելը, բացատրելը, զրույց… Աշակերտների մտածողության զարգացման, հետաքրքրությունների, |
| | հմտությունների, կարողությունների ձևավորման համար կիրառվել են նոր մեթոդներ՝ խճանկար, շրջագայություն պատկերասրահում, Վենի դիագրամ, խմբավորում, մտագրոհ, դերային խաղ, գաղափարների քարտեզագրում, Տ-աձևաղյուսակ, քառաբաժան, ԳՈՒՍ, գնահատման անիվ… |
| Իմ առարկայի դասավանդման ընթացքումնպաստել եմ հայրենասիրության դաստիարակմանըհետևյալ մեթոդներով: | Մշտապես տարվել է աշխատանք ազգային մշակութային ժառանգությանպահպանման ու զարգացման ուղղությամբ: Կազմակերպվել են ստեղծագործական մրցույթներ: Ավանդական մեթոդներին զուգահեռկիրառվել են նաև գաղափարների քարտեզագրում, մտագրոհ, Տ-աձև աղյուսակ, քառաբաժան մեթոդները: |

| | |
|---|---|
| Իմ առարկայի դասավանդման ընթացքումնպաստել եմ պատշաճ վարքագիծի և վարվելակերպի ձևավորմանը հետևյալ մեթոդներով: | Քննարկվել են ստեղծագործությունները, կատարվել են վերլուծություններ: Կիրառվել են ավանդական և նոր մեթոդներ՝ մտագրոհ, ԳՈՒՍ, քառաբաժան, գնահատման անիվ… |
| 5) Սովորողների մեջ զարգացնում է ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի անհատական կարողությունները: | |
| Պլանավորում | |
| Աշխատանք | Նկարագրություն Ծանոթություն |
| Իմ առարկայի դասավանդմանընթացքում զարգացրել եմ | Կազմակերպվել են մի շարք բաց դասեր՝ <<Ինչպես կավարտեի |
| ինքնուրույնություն, նախաձեռնություն, ստեղծագործական ունակություններ հետևյալ մեթոդներով: | ստեղծագործությունը>>, <<Հեքիաթի հերոսը ես եմ>>, <<Մեր հյուրը մեծ բանաստեղծն է>>, <<Հարցեր գրական հերոսին>>… Հանձնարարվել են գրել ստեղծագործական և վերլուծական շարադրություններ, կատարելգործնական աշխատանքներ: |

| |
|---|
| 6) Նպաստում է սովորողների մեջ ինքնակառավարման տարրերի ձևավորմանը. |
| Պլանավորում |
| Աշխատանք Նկարագրություն Ծանոթություն |
| Իմ առարկայի դասավանդման ընթացքումնպաստել եմ սովորողների մեջ ինքնակառավարման տարրերի ձևավորմանը հետևյալ մեթոդներով: Կազմակերպվել են մի շարք միջոցառումներ՝ <<Դասը վարում է աշակերտը>>, <<Ինքնակառավարմանօր>>: Կիրառվել է գնահատման անիվ մեթոդը: |
| 7) Հարգում և պաշտպանում է սովորողի իրավունքներն ու ազատությունները,պատիվն ու արժանապատվությունը. |

| Պլանավորում | |
|---|---|
| Աշխատանք | Նկարագրություն<br>Ծանոթություն |
| Հարգել եմ և պաշտպանել սովորողի իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը: | Առաջնորդվել եմ հետևյալ օրենքներով և փաստաթղթերով՝ ՀՀ Սահմանադրություն, ՀՀօրենքը հանրակրթության մասին, ՀՀ օրենքը երեխայի իրավունքների մասին, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, դպրոցի օրինակելի կանոնադրություն, դպրոցի ներքին կարգապահական կանոններ… |
| 8) Հետևողականորեն կատարելագործում է իր առարկայական և մասնագիտականգիտելիքներն ու հմտությունները, իրականացնում ստեղծագործական և հետազոտական աշխատանքներ: | |
| Պլանավորում | |
| Աշխատանք | Նկարագրություն<br>Ծանոթություն |
| Ինքնուրույն ուսումնասիրել եմ հետևյալմանկավարժական և մեթոդական գրականությունը: | Պարբերաբար ուսումնասիրել եմ Կրթության ազգային ինստիտուտ /www.aniedu.am/Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն /www.ktak.am/ Գնահատման և թեստավորման կենտրոն /www.atc.am/ ՀՀ ԿԳՆ Կրթության պետական տեսչությունwww.kpt.am Հայկական կրթական միջավայր Պաշարների շտեմարան /lib.armedu.am/ կայքէջերում տեղադրված նյութերը: Ուսումնասիրել եմ <<Հայոց լեզու և գրականություն>>, <<Նախաշավիղ>> ամսագրերը: Ծանոթացել եմ <<Կրթություն>> շաբաթաթերթի նյութերին: |

| | |
|---|---|
| Ուսումնական տարվա ընթացքումիրականացրել եմ հետևյալ ստեղծագործական և հետազոտական աշխատանքները: | Կազմել եմ սցենարներ, թեստեր, ուսումնաօժանդակ նյութեր, որոնք տեղակայվել են lib.armedu.am կայքէջում: <<Թեմատիկ պլան /Մայրենի,մաթեմատիկա,ես և շրջակա աշխարհը, երաժշտություն, կերպարվեստ,տեխնոլոգիա, ֆիզկուլտուրա 4_րդ դասարան/>>, <<Գիտելիքների ամփոփիչ ստուգման թեստեր>>, /: |
| Աշխատանք | Նկարագրություն Ծանոթություն |
| Աշխատանքի ընթացքում պահպանել եմուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններովսահմանված պահանջները: | 2022_2023 ուսումնական տարվա ընթացքում որևէ դիտողություն կամ նկատողություն չեմ ստացել: |